

Արձանագրություն №11/2020-2021

Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի՝ 2021թ. հունիսի 24-ին տեղի ունեցած թիվ 11 նիստի

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 88 (ութսունութ) անդամներից 70-ը (յոթանասունը):

Նիստը նախագահում էր ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Գեղամ Գևորգյանը: Նիստի քարտուղարն էր Լևոն Հովսեփյանը:

Նիստը նախագահող Գ. Գևորգյանը, բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և առաջարկեց հաստատել նիստի օրակարգը.

1. Դեկանի պաշտոնի ընտրության մասին ֆակուլտետային գիտական խորհրդի ընդունած որոշման հաստատում (զեկ.՝ գիտական խորհրդի մրցութային հանձնաժողովի նախագահ Պ. Վարդևանյան)
2. Ամբիոնի վարիչի պաշտոնների ընտրության վերաբերյալ ֆակուլտետային գիտական խորհուրդների ընդունած որոշումների հաստատում (զեկ.՝ գիտական խորհրդի մրցութային հանձնաժողովի նախագահ Պ. Վարդևանյան):
3. Ամբիոնի պրոֆեսորի պաշտոնում ընտրության վերաբերյալ ֆակուլտետային գիտական խորհուրդների ընդունած որոշումների հաստատում (զեկ.՝ գիտական խորհրդի մրցութային հանձնաժողովի նախագահ Պ. Վարդևանյան)
4. Պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումների շնորհում (զեկ.՝ մրցութային հանձնաժողովի նախագահ Պ. Վարդևանյան):
5. Ֆարմացիայի ինստիտուտում 2021-2022 ուսումնական տարվա համար Ռաֆայել Մաթևոսյանի և Միհրան Բարոնյանի անվանական կրթաթոշակներ սահմանելու մասին:
6. Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետում հոգեբանական աջակցության ուսումնագիտական լաբորատորիա ստեղծելու վերաբերյալ ԵՊՀ հոգաբարձուների խորհրդին միջնորդելու մասին (զեկ.՝ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի դեկան Ա. Բաղդասարյան):
7. Հաղորդում ԵՊՀ ներբուհական դրամաշնորհային ծրագրերի մասին (զեկ.՝ ռեկտորի ժ/պ Գ. Գևորգյան):

8. Հաղորդում ԵՊՀ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ 2020թ. հարցման արդյունքների մասին (զեկ.՝ պրոռեկտոր Ռ. Բարխուդարյան):
9. Հաղորդում ասպիրանտների կարողությունների զարգացման կենտրոնի մասին (զեկ.՝ պրոռեկտոր Ռ. Բարխուդարյան):
10. Բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի հաստատում (զեկ.՝ գիտական խորհրդի որակի ապահովման հանձնաժողովի նախագահ Է. Գևորգյան)

Ընթացիկ հարցեր

11.1. «Թարգմանաբանություն. տեսություն և պրակտիկա» միջազգային գիտական հանդեսի անդրանիկ համարը հրատարակության երաշխավորելու մասին:

11.2. «Русский язык. Учебник для гуманитарных вузов РА» աշխատանքը (հեղ.՝ Ս. Լալայան, Ս. Այվազյան, Ա. Բաղդասարյան, Ս. Դպիրյան, Ս. Մկրտչյան-Լալայան) և «Грамматика в упражнениях» վարժությունների ժողովածուն հրատարակության երաշխավորելու և որպես բուհական դասագիրք հաստատելու հարցում ՀՀ ԿԳՄՄՆ-ին միջնորդելու մասին:

11.3. «Մակրոմոլեկուլների մոլեկուլային բնութագրերը լուծույթներում» աշխատանքը (հեղ.՝ Վիգեն Բարխուդարյան) հրատարակության երաշխավորելու մասին:

11.4. «All about the English Adjective in Figurative Use» և «All about the English in General Use» երկհատոր ուսումնական ձեռնարկը (հեղ. Ս. Կարապետյան, Գ. Հովհաննիսյան) վերահրատարակության երաշխավորելու և որպես բուհական ձեռնարկ հաստատելու միջնորդությամբ ՀՀ ԿԳՄՄՆ-ին դիմելու մասին:

Գիտխորհրդի անդամների կողմից օրակարգի համար այլ հարց չառաջարկվեց, և մասնակիցների բաց քվեարկությամբ ընդունվեց նիստի օրակարգը:

1.Լսեցին.-Ֆակուլտետի ղեկանի մրցութային ընտրության՝ ֆակուլտետային գիտխորհրդի որոշման հաստատման մասին: Գիտական խորհրդի մրցութային մշտական հանձնաժողովի նախագահ Պ. Վարդևանյանը ներկայացրեց Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի ղեկանի մրցութային ընտրության համար հայտ ներկայացրած թեկնածուին և ֆակուլտետի գիտական խորհրդում կայացած քվեարկության արդյունքները:

Դեկանի պաշտոնի հավակնորդն էր.

Հ/Հ	ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ ՀԱՅՐԱՆՈՒՆ	ՊԱՇՏՈՆԸ
1.	Հակոբյան Յուրի Ռուբենի	Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի դեկան

Կազմակերպվեց փակ, գաղտնի առցանց քվեարկություն, որին մասնակցեցին նիստին ներկա 70 անդամներից 55-ը: Գիտական քարտուղար Լ. Հովսեփյանը ներկայացրեց քվեարկության արդյունքները:

Հ/Հ	ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ ՀԱՅՐԱՆՈՒՆ	Կողմ	Դեմ
1.	Հակոբյան Յուրի Ռուբենի	53	2

Որոշեցին. – Հաստատել փակ, գաղտնի առցանց քվեարկության արդյունքները: Ընտրված դեկանի հետ կնքել աշխատանքային պայմանագիր՝ համաձայն ԵՊՀ ֆակուլտետի դեկանի ընտրության ընթացակարգի:

2.Լսեցին.-Ամբիոնի վարիչի պաշտոնների ընտրության վերաբերյալ ֆակուլտետային գիտական խորհուրդների ընդունած որոշումների հաստատման մասին:

Գիտական խորհրդի մրցութային մշտական հանձնաժողովի նախագահ Պ. Վարդևանյանը ներկայացրեց 4 ամբիոնների վարիչների պաշտոններին հավակնորդներին: Ամբիոնի վարիչի պաշտոնին հավակնորդներն էին.

Հ/Հ	ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ ՀԱՅՐԱՆՈՒՆ	ՊԱՇՏՈՆԸ
1.	Հայկյանց Արմեն Մերուժանի	քաղաքացիական իրավունքի ամբիոնի վարիչ
2.	Հակոբյան Հակոբ Ավագի	թվային անալիզի և մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի վարիչ
3.	Սարգսյան Սիրանուշ Գեղամի	ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ամբիոնի վարիչ
4.	Դանիելյան Գևորգ Բալաբեկի	պետության և իրավունքի տեսության և պատմության ամբիոնի վարիչ

Կազմակերպվեց փակ, գաղտնի առցանց քվեարկություն, որին մասնակցեցին նիստին ներկա 70 անդամներից 60-ը: Գիտական քարտուղար Լ. Հովսեփյանը ներկայացրեց քվեարկության արդյունքները:

Հ/Հ	ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ ՀԱՅՐԱՆՈՒՆ	Կողմ	Դեմ
1.	Հայկյանց Արմեն Մերուժանի	59	1
2.	Հակոբյան Հակոբ Ավագի	60	0
3.	Սարգսյան Սիրանուշ Գեղամի	57	3
4.	Դանիելյան Գևորգ Բալաբեկի	58	2

Որոշեցին. - Հաստատել վերոնշյալ պրոֆեսորների և դոցենտների՝ ամբիոնի վարիչ ընտրվելու վերաբերյալ ԵՊՀ կառուցվածքային ստորաբաժանումների գիտական խորհուրդների որոշումները, և ընտրված ամբիոնի վարիչների հետ կնքել աշխատանքային պայմանագիր՝ 5 տարի ժամկետով:

3.Լսեցին.- Ամբիոնի պրոֆեսորի պաշտոնում ընտրության վերաբերյալ ֆակուլտետային գիտական խորհուրդների ընդունած որոշումների հաստատման մասին:

Պրոֆեսորի պաշտոններին հավակնում էին.

N	Ազգանուն, անուն, հայրանուն	Պաշտոնը
1.	Գասպարյան Ֆերդինանդ Վազգենի	Կիսահաղորդիչների ֆիզիկայի և միկրոէլեկտրոնիկայի ամբիոնի պրոֆեսոր
2.	Կնյազյան Աննա Տարիելի	Անգլիական բանասիրության ամբիոնի պրոֆեսոր
3.	Սիմյան Տիգրան Սերժիկի	Արտասահմանյան գրականության ամբիոնի պրոֆեսոր
4.	Ավետիսյան Յուրի Հովհաննեսի	Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ամբիոնի պրոֆեսոր
5.	Ավետիսյան Վահրամ Դավիթի	Քաղաքացիական իրավունքի ամբիոնի պրոֆեսոր
6.	Մուրադյան Սամվել Պարզի	Ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության ամբ. պրոֆեսոր
7.	Սաֆարյան Վազգեն Հմայակի	Ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության ամբ. պրոֆեսոր
8.	Մաթևոսյան Լիաննա Բենիամինի	Ռուսաց լեզվի, տիպաբանության և հաղորդակցման տեսության ամբ. պրոֆեսոր
9.	Պապոյան Վարդուհի Ռոբերտի	Ընդհանուր հոգեբանության ամբիոնի պրոֆեսոր
10.	Գրիգորյան Կարինե Ռաֆայելի	Ֆիզիկական և կոլոիդ քիմիայի ամբ. պրոֆեսոր

11.	Բոստանջյան Վարդան Բաբկենի	Ֆինանսահաշվային ամբ. պրոֆեսոր
12.	Ենգիբարյան Վահե Գուրզենի	Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբ. պրոֆեսոր
13.	Մարգարյան Աննա Ռազմիկի	Քրեական իրավունքի ամբ. պրոֆեսոր
14.	Ալեքսանյան Աշոտ Սեյրանի	Քաղաքական գիտության պատմության և տեսության ամբ. պրոֆեսոր
15.	Զասլավսկայա Մարիա Իգորի	Կիրառական սոցիոլոգիայի ամբիոնի պրոֆեսոր
16.	Հովհաննիսյան Գալինա	Գենետիկայի և բջջաբանության ամբ. պրոֆեսոր
17.	Չուբարյան Աստղիկ Էդվարդի	Անգլիական բանասիրության ամբ. պրոֆեսոր
18.	Հոհաննիսյան Արթուր Հովհաննեսի	Թվային անալիզի և մաթեմատիկական մոդելավորման ամբ. պրոֆեսոր
19.	Չուբարյան Անահիտ Արտաշեսի	Դիսկրետ մաթեմատիկայի և տեսական ինֆորմատիկայի ամբ պրոֆեսոր
20.	Հովհաննիսյան Դավիթ Արտաշեսի	Արաբագիտության ամբիոնի պրոֆեսոր
21.	Հարությունյան Նարինե Լևոնի	Միջմշակութային հաղորդակցության անգլ. ամբ. պրոֆեսոր
22.	Մանասյան Ալեքսանդր Սարգսի	Փիլիսոփայության պատմության, տեսության, և տրամաբանության ամբ. պրոֆեսոր
23.	Գալստյան Խաչիկ Սամվելի	Քաղաքական գիտության, պատմության և տեսության ամբիոնի պրոֆեսոր
24.	Մարգարյան Հայկ Լևոնի	Կառավարման և գործարարության ամբ. պրոֆեսոր
25.	Առաքելյան Արա Հրաչիկի	Արտասահմանյան գրականության ամբ. պրոֆեսոր
26.	Զիվանյան Ալվարդ Հակոբի	Անգլիական բանասիրության ամբ. պրոֆեսոր
27.	Գևորգյան Ռուբեն Ալբերտի	Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբ. պրոֆեսոր

Կազմակերպվեց փակ, գաղտնի առցանց քվեարկություն, որին մասնակցեցին նիստին ներկա 70 անդամներից 61-ը: Գիտական քարտուղար Լ. Հովսեփյանը ներկայացրեց քվեարկության արդյունքները.

N	Ազգանուն, անուն, հայրանուն	Կողմ	Դեմ
1.	Գասպարյան Ֆերդինանդ Վազգենի	59	2
2.	Կնյազյան Աննա Տարիելի	60	1
3.	Սիմյան Տիգրան Սերժիկի	60	1

4.	Ավետիսյան Յուրի Հովհաննեսի	54	7
5.	Ավետիսյան Վահրամ Դավիթի	58	3
6.	Մուրադյան Սամվել Պարզևի	59	2
7.	Սաֆարյան Վազգեն Հմայակի	59	2
8.	Մաթևոսյան Լիաննա Բենիամինի	59	2
9.	Պապոյան Վարդուհի Ռոբերտի	59	2
10.	Գրիգորյան Կարինե Ռաֆայելի	61	0
11.	Բոստանջյան Վարդան Բաբկենի	51	8
12.	Ենգիբարյան Վահե Գուրգենի	56	3
13.	Մարգարյան Աննա Ռազմիկի	56	3
14.	Ալեքսանյան Աշոտ Սեյրանի	57	2
15.	Զապլավսկայա Մարիա Իգորի	55	4
16.	Հովհաննիսյան Գալինա	57	2
17.	Չուբարյան Աստղիկ Էդվարդի	53	6
18.	Հոհաննիսյան Արթուր Հովհաննեսի	56	3
19.	Չուբարյան Անահիտ Արտաշեսի	49	10
20.	Հովհաննիսյան Դավիթ Արտաշեսի	55	4
21.	Հարությունյան Նարինե Լևոնի	59	2
22.	Մանասյան Ալեքսանդր Սարգսի	56	5
23.	Գալստյան Խաչիկ Սամվելի	57	4
24.	Մարգարյան Հայկ Լևոնի	56	5
25.	Առաքելյան Արա Հրաչիկի	60	1
26.	Զիվանյան Ալվարդ Հակոբի	59	2
27.	Գևորգյան Ռուբեն Ալբերտի	58	3

Որոշեցին. - Հաստատել վերոնշյալ աշխատակիցների՝ պրոֆեսորի պաշտոնում ընտրվելու վերաբերյալ ԵՊՀ ֆակուլտետների գիտական խորհուրդների որոշումները և ընտրված պրոֆեսորների հետ կնքել աշխատանքային պայմանագիր՝ համաձայն ընթացակարգի 33-րդ կետի:

4.Լսեցին. - Պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումների շնորհման մասին: Գիտական խորհրդի մրցութային մշտական հանձնաժողովի նախագահ Պ. Վարդևանյանը ներկայացրեց գիտական կոչման հավակնորդներին:

Պրոֆեսորի գիտական կոչման հավակնորդներն էին.

Հ/Հ	ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ ՀԱՅՐԱՆՈՒՆ	ՊԱՇՏՈՆԸ
-----	-----------------------------	---------

1.	Խաչատրյան Ռաֆիկ Աղասու	Թվային անալիզի և մաթ. մոդելավորման ամբ. դոցենտ
2.	Մուրադյան Գայանե Հարությունի	Անգլիական բանասիրության ամբ. դոցենտ

Դոցենտի գիտական կոչման հավակնորդներն էին.

Հ/Հ	ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ ՀԱՅՐԱՆՈՒՆ	ՊԱՇՏՈՆԸ
1.	Տետեյան Արշալույս Ավետիսի	Հայաստանի հարակից երկրների պատմության ամբ. ասիստենտ
2.	Եզանյան Գագիկ Կիմի	Կառավարման և գործարարության ամբ. ասիստենտ

Կազմակերպվեց փակ, գաղտնի առցանց քվեարկություն, որին մասնակցեցին նիստին ներկա 70 անդամներից 64-ը: Գիտական քարտուղար Լ. Հովսեփյանը ներկայացրեց քվեարկության արդյունքները.

Պրոֆեսորի կոչում շնորհելու համար անցկացված քվեարկության արդյունքներն էին.

Հ/Հ	ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ ՀԱՅՐԱՆՈՒՆ	Կողմ	Դեմ
1.	Խաչատրյան Ռաֆիկ Աղասու	61	3
2.	Մուրադյան Գայանե Հարությունի	61	3

Դոցենտի կոչում շնորհելու համար անցկացված քվեարկության արդյունքներն էին.

Հ/Հ	ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ ՀԱՅՐԱՆՈՒՆ	Կողմ	Դեմ
3.	Տետեյան Արշալույս Ավետիսի	61	3
4.	Եզանյան Գագիկ Կիմի	59	5

Որոշեցին. - Դիմել ՀՀ ԿԳՄՍՆ բարձրագույն որակավորման կոմիտե՝ պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու վերաբերյալ ԵՊՀ գիտական խորհրդի որոշումը հաստատելու միջնորդությամբ:

5.Լսեցին.- Ֆարմացիայի ինստիտուտում 2021-2022 ուսումնական տարվա համար Ռաֆայել Մաթևոսյանի և Միհրան Բարոնյանի անվանական կրթաթոշակներ սահմանելու մասին: Ֆարմացիայի ինստիտուտի տնօրեն Աշոտ Մաղյանը ներկայացրեց, որ անվանական կրթաթոշակները նախատեսված են մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողների համար 50.000-ական դրամ գումարով:

Որոշեցին. - Երևանի պետական համալսարանի Ֆարմացիայի ինստիտուտում 2021/2022 ուսումնական տարվա առաջին կիսամյակից մագիստրատուրայի սովորողների համար սահմանել Ռաֆայել Մաթևոսյանի և Միհրան Բարոնյանի անվան կրթաթոշակներ:

6.Լսեցին.-Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետում հոգեբանական աջակցության ուսումնագործնական լաբորատորիա ստեղծելու վերաբերյալ ԵՊՀ հոգաբարձուների խորհրդին միջնորդելու մասին: Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի դեկան Ալեքսան Բաղդասարյանը նշեց, որ այն նախատեսված է բակալավրի և մագիստրատուրայի ավարտական կուրսերի ուսանողների համար՝ որպես պրակտիկա անցնելու հարթակ: Ուսումնագործնական լաբորատորիան ունի գործնական կարևոր նշանակություն՝ ուսանողների պրակտիկայի կազմակերպում, ԵՊՀ աշխատակիցներին և ուսանողներին, հասարակության խոցելի խմբերին անվճար հոգեբանական խորհրդատվության մատուցում, ավարտական կուրսերի ուսանողների գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար բավարար պայմանների ու խորհրդատվությունների ապահովում և այլն: Լաբորատորիայի շրջանակում նախատեսվում են անցկացնել նաև սովորողների մասնակցությամբ սոցիալ-հոգեբանական հետազոտություններ, ինչը պրակտիկ հոգեբանների կայացման համար կարևոր նշանակություն կունենա: Ռեկտորի Ժ/պ Գեղամ Գևորգյանը հավելեց, որ նման փորձ արդեն կա իրավագիտության ֆակուլտետում, որտեղ անվճար իրավաբանական խորհրդատվություն են մատուցում տարբեր խոցելի խմբերին: Նման լաբորատորիան լավ հարթակ կդառնա գիտագործնական աշխատանքների, ծառայությունների ու համապատասխան միջավայրի կայացման տեսանկյունից:

Որոշեցին. -Առաջարկել ԵՊՀ հոգաբարձուների խորհրդին՝ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետում ստեղծել «Հոգեբանական աջակցության ուսումնագործնական լաբորատորիա» կառուցվածքային ստորաբաժանում:

7.Լսեցին.- Հաղորդում ԵՊՀ ներբուհական դրամաշնորհային ծրագրերի մասին: Ռեկտորի Ժ/պ Գ. Գևորգյանը մինչ բուն հարցին անդրադառնալը նշեց, որ ԵՊՀ տարեկան բյուջեով նախատեսված է սեպտեմբերին ԵՊՀ հիմնական աշխատողների մի մասի աշխատավարձի բարձրացում 10 տոկոսով: Խոսքը վերաբերում է այն աշխատակիցներին, որոնց աշխատավարձը 2021թ. փետրվարի հրամանով չի բարձրացվել: Գ. Գևորգյանը,

անդրադառնալով օրակարգի հարցին, նշեց, որ ԵՊՀ զարգացման ռազմավարական ծրագրում նախատեսված է ներքին դրամաշնորհների և հրավիրյալ պրոֆեսորների ինստիտուտի կայացում և որոշվել է համատեղել դրանք: Նախատեսվում է յուրաքանչյուր տարի դրամաշնորհ հայտարարել 4 անվանակարգերում՝ հասարակագիտական, բանասիրական, բնագիտական և ֆիզիկամաթեմատիկական 3 տարի տևողությամբ: Դրամաշնորհային ծրագրի ղեկավարը պետք է լինի 65 տարին չլրացած ԵՊՀ հիմնական աշխատող և համապատասխանի որոշակի պայմանների, որոնք դեռևս ճշգրտման փուլում են: Ծրագրի ղեկավարի աշխատավարձը նախատեսվում է ամսեկան 200 հզ. դրամ: Ծրագրում անպայման պետք է ընդգրկված լինի համալսարանական երիտասարդ աշխատող և հիմնական աշխատող: Կես տարին մեկ անցկացվելու է մոնիթորինգ, որի արդյունքների հիման վրա կամ ծրագիրը կշարունակվի, կամ կդադարեցվի դրա ֆինանսավորումը: Բացի այդ, ծրագրի շրջանակում պետք է երկու կիսամյակ արտերկրից հրավիրյալ դասախոսը դասախոսի ԵՊՀ-ում մեկ կրթական մոդուլ բակալավրիատում, 1 մոդուլ մագիստրատուրայում: Կարող է թույլատրվել նաև հրավիրյալ դասախոսի խտացված դասախոսությունների անցկացումը 2 ամսում: Դրամաշնորհային ծրագրի հայտի շրջանակում պետք է ապահովվի արտերկրի գործընկերոջ՝ որպես հրավիրյալ դասախոսի մասնակցությունը դասախոսություններում և հետազոտական ծրագրում:

Որոշեցին. - ԵՊՀ ներբուհական դրամաշնորհային ծրագրերի մասին հաղորդումն ընդունելի գիտություն:

8.Լսեցին.- Հաղորդում ԵՊՀ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ 2020թ. հարցման արդյունքների մասին: Պրոռեկտոր Ռ. Բարխուդարյանը նշեց, որ յուրաքանչյուր տարի կազմակերպվում են շրջանավարտների հարցումներ և որոշ ժամանակը մեկ համեմատական վերլուծություն իրականացվում: Նախորդ տարի երկու տարվա համեմատական վերլուծություն է իրականացվել: Ռ. Բարխուդարյանը ներկայացրեց շրջանավարտների 2020թ. հարցումների որոշ տվյալներ: Ըստ այդմ՝ ուսումը շարունակելու ցանկությունն ավելի բարձր է բակալավրիատում, քան մագիստրատուրայում: Ապագա աշխատանքի մասին տեղեկացվածությունն ավելի բարձր է մագիստրատուրայում՝ հատկապես հեռակա համակարգում: Լսարանային պայմաններից, համակարգչային սրահներից, համացանցի մատչելիությունից բավարարվածության ցուցանիշները էականորեն չեն տարբերվում նախորդ հարցումների տվյալներից: Համացանցային մատչելիության մեծացման ուղղությամբ աշխատանքներ են իրականացվում և նախատեսվում է, որ ԵՊՀ ողջ տարածքը պետք է ապահովվի ինտերնետային հուսալի ծածկույթով: Բավարարվածությունը լաբորատորիաների կահավորանքից բակալավրիատում գերազանց և դրական է գնահատել մոտ 53 տոկոսը, մագիստրատուրայում՝ 57,7 տոկոսը, բավարարվածությունը ԵՊՀ ղեկավարությունից դրական և գերազանց է գնահատել բակալավրիատում մոտ 70, մագիստրատուրայում՝ 78

տոկոսը, գոհունակությունը ֆակուլտետի ղեկավարությունից՝ բակալավրիատում գերազանց մոտ 61, մագիստրատուրայում՝ 71,9 տոկոսը, գոհունակությունը պրոֆեսորադասախոսական կազմից՝ բակալավրիատում դրական և գերազանց 81, մագիստրատուրայում՝ մոտ 90 տոկոս և այլն: Գնահատման գործընթացում կաշառքի առկայության ցուցանիշը բակալավրիատում կազմել է 0,7, իսկ մասնավոր պարապմունքների առկայության ցուցանիշը՝ 4,3 տոկոս: ԵՊՀ-ում ստացած կրթությունը հարցվածների 42,8 տոկոսը գնահատել է գերազանց, 43 տոկոսը՝ դրական, 12,5 տոկոսը բավարար և միայն 1,7 տոկոսը՝ անբավարար:

Որոշեցին. - ԵՊՀ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ 2020թ. հարցման արդյունքների մասին հաղորդումն ընդունել ի գիտություն:

9.Լսեցին.-Հաղորդում ասպիրանտների կարողությունների զարգացման կենտրոնի մասին: Պրոռեկտոր Ռ. Բարխուդարյանը նշեց, որ կենտրոնը չի ենթադրում նոր կառուցվածքային ստորաբաժանման ստեղծում, ուստի հոգաբարձուների խորհրդի հաստատման կարիք չկա: Կենտրոնի նպատակը ասպիրանտների ընդհանուր կարողությունների զարգացման համար կազմակերպվող դասընթացների, կրթական ծրագրերի թարմացումը, բարելավումն ու կենտրոնացումն է: Ֆիզիկայի ֆակուլտետի ղեկան Ռ. Հակոբյանը նկատեց, որ ասպիրանտներն ավելի շատ են անցնում բուն մասնագիտությունից կտրված կրթական տարբեր մոդուլներ և մեկ տարին վատնում են ոչ մասնագիտական դասընթացների վրա և 3 տարին շատ ժամանակ չէ մասնագետ դառնալու համար: Ի պատասխան դիտարկմանը՝ ռեկտորի Ժ/պ Գ. Գևորգյանը նկատեց, որ մասնագետ պատրաստվում է 9 տարում և ոչ թե միայն ասպիրանտական 3 տարիներին՝ չհամաձայնելով նաև ոչ նեղ մասնագիտական առարկաները ավելորդ կրթության շրջանակում դիտարկելու մոտեցման հետ: Ասպիրանտին՝ որպես գիտնականի և ապագա դասախոսի, պահանջվելու են ընդհանրական գիտելիքներ ու կարողություններ և պատրաստություն: Ի լրումն վերոնշյալի՝ պրոռեկտոր Ռ. Բարխուդարյանը ներկայացրեց, որ կա «Coursera» հատուկ հարթակ, որում ներկայացված են բազմաթիվ համալսարանների կրթական ծրագրեր ու գաղափարներից մեկն այն է, որ ասպիրանտները իրենց մասնագիտության շրջանակում ընտրեն և անցնեն այդ ծրագրերից մեկը, հանձնեն քննություն և դրանով իսկ մասնագիտական քննությունից ապահովեն անհրաժեշտ կրեդիտ: Հնարավոր է նման մոտեցումը կիրառվի նաև դասախոսների որակավորման բարձրացման ծրագրի շրջանակում: Ռեկտորի Ժ/պ Գ. Գևորգյանը հավելեց, որ սա դեռևս քննարկման ու հնարավորությունների ճշգրտման փուլում է:

Որոշեցին. - Ասպիրանտների կարողությունների զարգացման կենտրոնի մասին հաղորդումն ընդունել ի գիտություն:

10.Լսեցին.– Բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի հաստատման մասին: Գիտական խորհրդի որակի ապահովման մշտական հանձնաժողովի նախագահ Է. Գևորգյանը ներկայացրեց, որ գիտական խորհրդի որակի ապահովման մշտական հանձնաժողովի նիստում քննարկվել է Բակալավրի և մագիստրոսի 2 նոր կրթական ծրագրերի հարցը: «Կրոնական զբոսաշրջություն» բակալավրի կրթական ծրագիրը ներկայացվել է Աստվածաբանության ֆակուլտետից և նախատեսվում է սկսել 2022-2023 ուսումնական տարվանից: Ծրագրի հիմնական նպատակը կրոնական զբոսաշրջության ոլորտում միջառարկայական գիտելիքներով ու հմտություններով օժտված մասնագետների պատրաստումն է: «Շուկայագիտություն մարքեթինգ» մագիստրոսի կրթական ծրագիրը, որի ուսումնառության տևողությունը 1,5 տարի է, ներկայացվել է Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի կողմից: Ծրագրի հիմնական նպատակը ուսանողներին այնպիսի գիտելիքների ու հմտությունների փոխանցումն է, որոնք հնարավորություն կտան մարքեթինգային հետազոտություններ և վերլուծություններ կատարել, ի վիճակի կլինեն կատարել հոգեբանական տարաբնույթ հնարքների ու տեխնոլոգիաների օգտագործմամբ նպատակային մարքեթինգային գործունեություն: Է. Գևորգյանը կարևորեց երկու նոր ծրագրերի միջգիտակարգային բնույթը, ինչը համապատասխանում է ԵՊՀ զարգացման ռազմավարական նոր ծրագրի դրույթներին: Ծրագրերն անցել են նոր կրթական ծրագրերի հաստատման համար անհրաժեշտ ընթացակարգերը, ներքին ու արտաքին փորձաքննությունները, արժանացել որակի ապահովման կենտրոնի հավանությանը:

Որոշեցին. – 1.Հաստատել`

Երևանի պետական համալսարանի Աստվածաբանության ֆակուլտետում «Կրոնական զբոսաշրջություն» բակալավրի նոր կրթական ծրագիրը և Երևանի պետական համալսարանի Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում «Շուկայագիտություն (Մարքեթինգ)» մագիստրոսի նոր կրթական ծրագիրը:

11.Լսեցին.– «Թարգմանաբանություն. տեսություն և պրակտիկա» միջազգային գիտական հանդեսի անդրանիկ համարը հրատարակության երաշխավորելու մասին: Գիտքարտուղար Լ. Հովսեփյանը ներկայացրեց, որ հանդեսը տպագրվելու է ԵԼՀ ֆակուլտետի կողմից միայն անգլերեն լեզվով, խմբագրական խորհրդում ընդգրկված են նաև մի շարք օտարերկրյա բուհերի ներկայացուցիչներ:

Որոշեցին. –«Թարգմանաբանություն. տեսություն և պրակտիկա» միջազգային գիտական հանդեսի (գլխ. խմբ.` Բ.Գ.Թ., դոցենտ Ռուզան Ղազարյան) անդրանիկ համարը երաշխավորել հրատարակության:

12.Լսեցին.- «Русский язык. Учебник для гуманитарных вузов РА» աշխատանքը (հեղ.՝ Ս. Լալայան, Մ. Այվազյան, Ա. Բաղդասարյան, Մ. Դպիրյան, Ս. Մկրտչյան-Լալայան) և «Грамматика в упражнениях» վարժությունների ժողովածուն հրատարակության երաշխավորելու և որպես բուհական դասագիրք հաստատելու հարցում ՀՀ ԿԳՄՄՆ-ին միջնորդելու մասին: Գիտքարտուղար Լ. Հովսեփյանը նշեց, որ այդ աշխատանքը ԵՊՀ-ի կողմից հրատարակվել է դեռևս 2018թ., շուրջ 3 տարի անցել է ուսումնական փորձաքննություն, կիրառվել ուսումնական գործընթացում և այժմ ներկայացված է դրա վերախմբագրված, լրամշակված տարբերակը:

Որոշեցին.- «Русский язык. Учебник для гуманитарных вузов РА» աշխատանքը (հեղ.՝ Ս. Լալայան, Մ. Այվազյան, Ա. Բաղդասարյան, Մ. Դպիրյան, Ս. Մկրտչյան-Լալայան) և «Грамматика в упражнениях» վարժությունների ժողովածուն երաշխավորել վերահրատարակության և որպես բուհական դասագիրք հաստատելու հարցում միջնորդել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը:

13.Լսեցին.-«Մակրոմոլեկուլների մոլեկուլային բնութագրերը լուծույթներում» աշխատանքը (հեղ.՝ Վիգեն Բարխուդարյան) հրատարակության երաշխավորելու մասին:

Որոշեցին.- «Մակրոմոլեկուլների մոլեկուլային բնութագրերը լուծույթներում» աշխատանքը (հեղ.՝ Վիգեն Բարխուդարյան) երաշխավորել հրատարակության:

14.Լսեցին.- «All about the English Adjective in Figurative Use» և «All about the English in General Use» երկհատոր ուսումնական ձեռնարկը (հեղ. Մ. Կարապետյան, Գ. Հովհաննիսյան) վերահրատարակության երաշխավորելու և որպես բուհական ձեռնարկ հաստատելու միջնորդությամբ ՀՀ ԿԳՄՄՆ-ին դիմելու մասին:

Որոշեցին.- «All about the English Adjective in Figurative Use» և «All about the English in General Use» երկհատոր ուսումնական ձեռնարկը (հեղ. Մ. Կարապետյան, Գ. Հովհաննիսյան) երաշխավորել վերահրատարակության: Միջնորդել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը՝ սույն աշխատանքը որպես բուհական ձեռնարկ հաստատելու հարցում:

Գիտական խորհրդի նախագահ՝

Գ. Գ. Գևորգյան

Գիտական խորհրդի քարտուղար՝

Լ.Ս. Հովսեփյան

28.06.2021թ.